ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2024 թվականի N: 372 -Ա Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 416-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-4-րդ մասերի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանում ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի N 422-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 416-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) վերնագրում և որոշման մեջ «մարզպետարան» բառը և իր բոլոր հոլովաձևերը փոխարինել «մարզպետի աշխատակազմ» բառերով:

2. Որոշման նախաբանը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերիմասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ

հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմին հատկացված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում» ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված հատկացումներն առավել արդյունավետ և հասցեական օգտագործելու նպատակով»:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմում (այսուհետ՝ Աշխատակազմ) ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգի մասին հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2024 թվականի օգոստոսի 19 -ի N:372 -Ա որոշման

Հավելված
«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2022 թվականի հուլիսի 27-ի N 416-Ա որոշման»

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. Սույն աշխատակարգը կարգավորում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Աշխատակազմին հատկացված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում» ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված հատկացումներն առավել արդյունավետ և հասցեական օգտագործելու նպատակով, ֆինանսական օգնություն տրամադրելու վերաբերյալ առաջարկությունները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին (այսուհետ՝ Մարզպետ) ներկայացնելու աշխատակարգը:

2. Յուրաքանչյուր նիստից առաջ Մարզպետի որոշմամբ ստեղծվում է Աշխատակազմում ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող (եզրակացությունները քննարկող) աշխատանքային խումբ (այսուհետ՝ Աշխատանքային խումբ): Աշխատանքային խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերն անցկացվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Նիստերն արձանագրվում են:

3. Աշխատանքային խմբի գործունեության նպատակն է՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացիներին (ընտանիքներին) ֆինանսական օգնության տրամադրման համար ներկայացված եզրակացությունների քննարկումը, ճշգրտումը և Մարզպետին ներկայացվող արձանագրության կազմումը:

4. Ֆինանսական օգնությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում բնակվող սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված հետևյալ խոցելի խմբերին՝

1) բազմազավակ ընտանիքներին,

2) ֆունկցիոնալության աստիճանի սահմանափակումկամ առողջական խնդիրներ ունեցող անձանց,

3) փաստացի միայնակ ապրող կենսաթոշակառուներին,

4) միակողմանի, երկկողմանի ծնողազուրկ կամ միակ ծնողի խնամքին գտնվող երեխաներ ունեցող ընտանիքներին,

5) ռազմական գործողությունների հետևանքով զոհված զինծառայողների ընտանիքներին, ինչպես նաև ֆունկցիոնալության աստիճանի սահմանափակում ունեցող զինծառայողներին,

6) Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին,

7) կացարան չունեցող կամ ժամանակավոր կացարանում բնակվող ընտանիքներին:

5. Ֆինանսական օգնությունը տրամադրվում է սույն աշխատակարգի 4-րդ կետում նշված խմբերին, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, անօգնականության, միայնակության, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ինչպես նաև Մարզպետի հայեցողությամբ նախատեսված այլ դեպքերում:

6. Ֆինանսական օգնությունը տրամադրվում է քաղաքացիների դիմումների հիման վրա՝ եզրակացությունների առկայությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Ֆինանսական օգնություն ստանալու վերաբերյալ քաղաքացու դիմումը մակագրվում է Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանմանը: Հանձնարարական ստացած ստորաբաժանման մասնագետների կողմից ուսումնասիրվում է դիմումը: Ուսումնասիրության արդյունքում կազմվում և ներկայացվում է եզրակացություն: Եզրակացությունն իր մեջ ներառում է տեղեկատվություն ընտանիքի կամ անձի սոցիալական վիճակի մասին:

7. Ֆինանսական օգնություն տրամադրելու նպատակով տրված եզրակացությունները քննարկվում են Աշխատանքային խմբում: Քննարկման արդյունքում ֆինանսական օգնություն տրամադրելու առաջարկությունն ընդունվում է

քվեարկությամբ՝ Աշխատանքային խմբի անդամների ընդհանուր թվի «կողմ» ձայների մեծամասնությամբ:

8. Նիստերի արձանագրությունները ստորագրվում են Աշխատանքային խմբի անդամների կողմից, իսկ խմբի անդամի կողմից հատուկ կարծիք ունենալու դեպքում՝ ստորագրության կողքին կատարվում է «հատուկ կարծիքը կցվում է» գրառումը և հանձնվում է ստորագրված հատուկ կարծիքը:

9. Արձանագրության հիման վրա Մարզպետն ընդունում է ֆինանսական օգնություն տրամադրելու մասին համապատասխան որոշում:

10. Ֆինանսական օգնությունը միևնույն անձանց (ընտանիքներին) կարող է տրամադրվել ոչ շուտ՝ քան վեց ամիսը մեկ անգամ, մինչև 100.000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով: Բացառիկ դեպքերում՝ հաշվի առնելով քաղաքացիների կարիքավորության առանձնահատկությունները, Մարզպետի հայեցողությամբ, կարող է ֆինանսական օգնություն տրամադրվել այլ ժամկետներում, այլ չափով:

11. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում» ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված Աշխատակազմին հատկացված միջոցների տարեկան գումարի ոչ ավել քան 40 (քառասուն) տոկոսը տրամադրվում է բացառապես Մարզպետի հայեցողությամբ՝ դիմումի և եզրակացության առկայության դեպքում:

12. Ֆինանսական օգնության գործընթացն ավարտելուց հետո Աշխատանքային խմբի ղեկավարն արձանագրությունը հանձնում է Աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է